XXIII

ՆՈՐ-ԴԱՐ

XXIII

№ 9 Ուրբաթ, 20 Յունուարի

1883 – 1906

Ուրբաթ, 20 Յունուարի № 9

Բաժանորդագինը պոստի ծախքով տարեկան 10 ր., վեց ամիսը՝ 6 ր., ամիսը 1 ր., համար՝ 5 կ.։
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում՝ միմիայն խմբագրատանը։
Խմբագրութեան գրասենեակը՝ Գրիբոեդովսկայա փողոց, տուն № 14.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ"
կամ Tiflis (Caucase), Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամէն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար առանձին համաձայնութեամբ։ Առաջին երեսում յայտարար. վճարը՝ կրկնապատիկ է։

1906

ՆՈՐ-ԴԱՐ

(ՔՍԱՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Այն 1906 թուին լոյս կըտեսնի քաղաքական-գրական ամենօրեայ «Նոր-Դար»-ը նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ։

Ամբողջ ռուս կայսրութեան մէջ «Նոր-Դար»-ի տարեկան բաժանորդագինն է 10 ր., վեց ամսուանը՝ 6 ր., ամսականը՝ 1 ր., համար՝ 5 կ.։ Արտասահմանի բաժանորդը վճարում է տարեկան՝ 40 ֆրանկ, վեց ամիսը՝ 25 ֆրանկ։

Յայտարարութիւնները ընդունւում են և օտար լեզուներով, բառը 2 կ., առաջին երեսումը 4 կ.։ Շատ անգամ կրկնուող յայտարարութիւնների համար մեծ զիջում։

Բաժանորդ գրւում են Թիֆլիսում՝ «Նոր-Դար»-ի գրասենեակում, Գրիբոեդովսկայա փողոցում, № 14.

Պոստով «Նոր-Դար»-ի հասցէն՝ Тифлисъ, ред. „Норъ-Даръ", կամ՝ Tiflis (Caucase), rédaction «Nor-Dar».

Ծանօթութիւն.—Թերթիս խմբագիրը մի տարի առաջ Պետերբուրգում իրաւունք է ստացել ընդարձակելու թերթի ծրագիրը, տալով թերթի մէջ պատկերներ, և առանձին ծրագրով լոյս հանելու շաբաթական պատկերազարդ յաւելուած։ Հարկ ենք համարում ծանուցանելու՝ հէնց որ թերթի միջոցները ներեն, կըձեռնարկենք պատկերազարդ «Նոր-Դար»-ի հրատարակութեան և կուղարկենք «Նոր-Դար»-ի բաժանորդներին 10 րուբլի բաժանորդագնի հաշւում։

Արամ և Սիմեօն Տէր-Խաչատրեանները ցաւօք սրտի յայտարարում են իրենց հօր՝

ՍԻՄԷՕՆ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ԽԱՉԱՏՐԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ Գանձակ քաղաքում, յունուարի 18-ին։

Թաղումը տեղի կունենայ յունուարի 22-ին, կիրակի օրը։

(103) 2—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋՆՈՐԴՈՂ.— Հայոց Եկեղեցին և «Պոլոժենիէ»-ն։
Եւրոպական պատերազմի երկիւղը։
Վրաստանում։
ՔՐՈՆԻԿՈՆ.—Թիֆլիս։ Ռուսիա։
Մեզ գրում են.—Իգդիրից։
ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ։
Քութայիսի վերջին անցքերից։
ԹՂԹԱԿՑ.—Բագու։
ՀՆՈՒԱԳՐՆԵՐ։
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Թիֆլիս, 19 յունուարի 1906 թ.

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ «ՊՈԼՈԺԵՆԻԷ»-Ն

Գ.

Չխօսենք այն մասին, թէ ով է իսկապէս մեղաւորը, որ Բարձրագոյն տրուած հոկտ 17-ի մանիֆեստը դեռ չէ իրագործուած. չքննենք, թէ այդ գործում ո՞ր կողմն է մեղաւոր՝ ծայրայեղ կուսակցութիւնները, միջին, չափաւոր կուսակցութիւնները, թէ ծայրայեղ աջակողմեանները բիւրոկրատիան, և ինչո՞վ...։ Գուցէ մեղաւոր են և բոլորը միասին։

Թողնենք այդ խնդիրը։

Իրողութիւնն այն է, որ հոկտեմբերի 17-ի մանիֆեստից յետոյ ամբողջ ռուսաց կայսրութեան մէջ Արխանգելսկից մինչև Արաքսի ափունքը երկիրը ողողւում է անմեղ մարդկանց արիւնով. մարդիկ կանգնել են միմեանց դէմ՝ եղբայրն սպանում է եղբօրը. մարդ արարածը, որի մի մասն արդէն գազանից է բաղկացած, այսօր, ամբողջապէս գազան կտրած, խմում է իր նմանի արիւնը և չի յագենում...

Ինչո՞ւ։

Յաւերժական կոնստիտուցիան անցաւ, սլացաւ հոկտեմբ. 17-ին Ռուսիայի երկնքով և երկնքի բարձրութիւնից, ամպերի միջից նայում է իր նահատակուող մօրը՝ ռեւոլիւցիայի վրայ, որի միակ յանցանքն այն է եղել, որ ծնել է իր աղջկան (կոնստիտուցիային) առանց պահանջուած դոկումենտների, առանց պոլիցիայի թոյլտւութեան։

Կոնստիտուցիան, այդ սիրուն արարածը, հեռու է մեզնից, և նրա տեղ այսօր գործում է մի հսկայ ռէակցիան։ Կնճռոտ, անճոռնի դէմքով, հեգնութեան ժպիտը ցամաքած շրթունքների վրայ, դժոխքը մարած աչքերի մէջ՝ այդ քաւթառը իր ջլոտ, սատանի երկաթէ մատներով պինդ բռնել է ռեւոլիւցիայի ոտներից և քարշ է տալիս նրան։ Կռիւն անհաւասար է, սոսկալի և արիւնահեղ։

Բայց, ինչ էլ որ լինի, ռեւոլիւցիան հալածանքից չի մեռնիլ. չէ, չէ։ Ընդհակառակը։ Մայրն իր այնքան տանջանքներով ծընած աղջկան հօ ձեռքից չի՞ տալ։

Երբ սիրուն կոնստիտուցիան իրեն հասանելի տեղը բազմի, այն ժամանակ միայն նրա մայրը՝ ռեւոլիւցիան խաղաղ և հանգիստ հոգով կը մեռնի։ Եւ Ռուսիան, նրա հետ և մեր երկիրը նոր կեանք, նոր շունչ կառնեն և երանի չեն տալ անցած-գնացած օրերին... Սա կեանք չէ, որ մենք ապրում ենք. սա օդ չէ, որ մենք շնչում ենք։

Ազատութի՜ւն, ազատութի՜ւն, որ երկինքը շնորհել է մարդկանց, իսկ մարդիկ խլում են միմեանցից։ Երբ այդ լինի, երբ խօսքի, մտքի, խղճի, անձի ազատութիւն լինի, որին մենք սպասում ենք, այն ժամանակ մեր ազգն էլ ազատ շունչ կը քաշէ արիւնոտ խաւարի կապանքներից։

Ազատ քաղաքացիներից բաղկացած ազգն էլ ազատ կը լինի իր գոյութեան պայմանները որոնելու, գտնելու և պահպանելու։

Պոլիցեական ռեժիմի ժամանակ գոյութիւն առած «Պոլոժենիէ»-ն ինքն իրեն կըլուծուի, և Հայաստանեայց Եկեղեցին կը վերադառնայ իր նախկին ինքնավարութեան։

Իսկ այդ ինքնավարութեան ոգուն խորթ է սինոդը իր պրոկուրորով, այնքան խորթ մեր Եկեղեցու ոգուն, որքան խորթ է Գէորգ Դ. կաթողիկոսի օրով ս. Էջմիածնի տաճարի կողքին բարձրացած նոր շինութիւնը իր ոճով՝ ս. Էջմիածնի ոճի հետ համեմատած։

Կաթողիկոսացուներ չպէտք է ընտրուեն։ Ժողովուրդն ընտրում է կաթողիկոս։ Այնուհետև ամենայն հայոց կաթողիկոսն ինքը նշանակում է իրեն տեղակալ՝ մինչև նոր կաթողիկոսի ընտրութիւնը։

Եկեղեցուն վերաբերեալ յոյժ կարևոր խնդիրները որոշում է եկեղեցական ժողովը։

Ամենայն հայոց կաթողիկոսը ս. Էջմիածնի վանահայրը չէ, այլ ամբողջ հայադաւան ազգի՝ ի սփիւռս աշխարհի վերցրած՝ հոգևոր պետը, հետևաբար նա պէտք է անկախ լինի բոլոր ամենայնի։

Հայոց ազգային Եկեղեցին պէտք է կոչուի Հայոց Եկեղեցի և ոչ «Հայ-Գրիգորեան Եկեղեցի» միտումով հնարած խորթ անունով։

Այնուհետև...

ԱԶԴ

Մինչև յունուարի 25-ը բաժանորդ չգրուողներին կը դադարեցնենք թերթի առաքումը։

Խնդրում ենք նրանց, որոնք կը կամենային շարունակ ստանալ «Նոր-Դար»-ը շտապել բաժանորդ գրուելու։

Խնդրում ենք և նրանց, որոնց վրայ անցեալից պարտքեր են մնում, չմոռանալ ուղարկելու իրենց պարտքը։

Այն հանգամանքը, որ պակաս թըւով են լոյս տեսել համարները, թող չծառայէ այլ և այլ պատճառաբանութիւնների, քանի որ բացառիկ դրութիւնից աւելի մեծ չափով խմբագրութիւնս է տուժել։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՐԿԻՒՂԸ

Ռուսական յեղափոխութիւնը և հայ-թաթարական ընդհարումը, որ քրոնիկական ախտ դառնալու ընթացք են ստացել, մեզ ամենևս այնքան գրաւել, մեր մտքերն այնքան շփոթել, մեր հոգիներն այնքան յուզել են, որ մենք դըրսի աշխարհում, մեր երկրից, Ռուսիայից դուրս ինչ որ անցնում, ինչ որ կատարւում է, շատ քիչ ուշադրութեան ենք առնում։

Մինչև անգամ մոռացանք ռուս-ճապոնական պատերազմը, մոռացանք հետևելու և քննութեան առնելու յաղթութեան և պարտութեան մէջ դերակատարներին, նրանց գործերը։

Մենք չիմացանք, թէ ինչպէս վերադարձան իրենց հայրենիքը՝ Տոգոն, Կուրոկին, Օյաման, Նոգին և միւսը, և միւսը. ո՞րտեղ են դրանք, ինչպէս ընդունեց դրանց հայրենիքը։ Չգիտենք անգամ. պարտութիւն կրող Կուրոպատկինը, Ստեսսելը, Վիրենը և այլք, որոնց անունը լեգիոն է, ո՞րտեղ են, ինչ բանի են.. Հայրենիքը, դրանց բաղդից, մոռացաւ դրանց։

Անցեալը մոռանալով՝ մենք ինչ դրութեան մէջ էլ որ ենք, չը պէտք է անտես անենք գալիքը։

Այսօր եւրոպական մեծ պետութիւններն խրարանցման մէջ են. Գերմանիան, որ ցամաքի ամենազօրաւոր պետութիւնն էր և այժմ աւելին է, պատերազմի պատրաստութեան մէջ է. և այդ պատրաստութեան ծայրն ուղղուած է Ֆրանսիայի դէմ։

Եւրոպական լրագրների հաղորդածներին և բարձրացրած աղմուկին նայած, ֆրանս-գերմանական պատերազմն արդէն սկըսուած պէտք է լինէր։

Եթէ, ճշմարիտ, այդ պատերազմը տեղի ունենայ, դա կըլինի անցեալ դարի եօթանասնական թուականի ֆրանս-գերմանական պատերազմի երկրորդ հրատարակութիւնը։

Պատերազմ Գերմանիայի և Ֆրանսիայի այսինքն երկու եւրոպական առաջնակարգ պետութիւնների միջև՝ նշանակում է եւրոպական, համաշխարհային պատերազմ. դրութիւնը և յարաբերութիւնները պետութիւնների միջև այնպէս են, որ միւս պետութիւնները դժուար թէ կարողանան չեզոք մնալ, եթէ պատերազմը բռնկեց։

Ֆրանսիայի և Գերմանիայի միջև տարաձայնութեան պատճառն Աֆրիկայի հիւսիսում գտնուող մահմեդական Մարոկկո երկիրն է, որ կպած է Տունիսին։ Այս մասին խօսքը հետևեալ անգամին թողնելով, պէտք է այստեղ յիշատակենք, որ այդ Մարոկկոյից աւելի հիւսիս՝ Միջերկրական ծովի միւս եզերքում գտնուող, Ֆրանսիայի հարաւում, Սպանիան էր եօթանասնական թըւականի ֆրանս-գերմանական կըռուի խնձորը, որի հետևանքը Նապոլէոնի կայսրութեան անկումն և գերմանական միութեան և կայսրութեան հաստատութիւնն եղաւ։

Այն ժամանակ սպանական մարշալ Պրիմն առաջարկել էր գերմանական պրինց Հոհէնցոլէրին սպանական գահը, որը, ի հարկէ, հաճելի չպէտք է լինէր Նապոլէոնական Ֆրանսիային, բայց սպանական գահի խնդիրը պատրուակ առած տեղի ունեցաւ ֆրանս-պրուսական մեծ պատերազմը։ Այժմս Մարոկկոյում Ֆրանսիան ուզում է առաջին տեղը բռնել, իսկ Գերմանեան այդ չէ ուզում։ Դրանից առաջացաւ դիպլոմատիկական վէճ երկու կառավարութեան միջև, որի լուծումը յանձնուած է այժմս Ալջեզիրասում գումարուած կոնֆերենցիային։

Այնուամենայնիւ պատերազմի երկիւղը մեծ է, և լրագրները, ինչպէս վերն ասացինք, արդէն պատերազմի փողն են փչում։

Ինչպէս եօթանասնական թըւականին սպանական գահի խընդիրը, այնպէս և այժմս մարոկկոյի խնդիրը միմիայն պատրուակ է, որի միջոցով երկու կողմը միմեանց հետ իրենց ուրիշ հաշիւներն են ուզում տեսնել։

Այս այսպէս լինելով, մենք այն հաւատին ենք, որ Գերմանիան պատերազմ չի սկսիլ Ֆրանսիայի դէմ մի Մարոկկոյի համար։

Որպէս զի այդպիսի մի մեծ և պատասխանատու պատերազմ կարողանայ սկսել և յաջողութեամբ վերջացնել Վիլհելմի կառավարութիւնը, դրա համար անհրաժեշտ է, որ գերմանական ժողովուրդը համոզուի պատերազմի անհրաժեշտութեան. առանց գերմանական ժողովրդի կամքի և հաւանութեան, ով ինչ ուզում է ասէ, գերմանական կառավարութիւնը չի վստահանայ պատերազմելու. յարձակողական պատերազմի դէպքում ժողովուրդը պէտք է կառավարութեան հետ համամիտ լինի. իսկ այդ կարելի չէ սպասել, քանի որ ժողովրդի համար Մարոկկոն այնքան հեռու է, որ նա երբէք չի համարձակուիլ հարևան մեծ երկրի դէմ յարձակուելու և իւր գոյութիւնը և ամբողջութիւնը վտանգի ենթարկելու մի անծանօթ Մարոկկոյի համար։ Այլ է, երբ Գերմանիայի վրայ յարձակւում են, և նա զգում է, որ իւր էութեան և գոյութեան խնդիրն է հրապարակի վրայ դրուած, ինչպէս որ այդ էր եօթանասնական թուականին, և Բիսմարկն այնպէս արաւ, որ յարձակուողը, պատերազմ հրատարակողը Ֆրանսիան եղաւ։

Մէջտեղ դրուած էր գերմանական միութեան խնդիրը. դրա համար գերմանական ժողովուրդն ինքը գնաց և պատերազմեց ու յաղթեց։

Իսկ այժմս ինչո՞ւ պէտք է պատերազմէ գերմանական ժողովուրդը։ Մարոկկոյի համար։ Դա շատ քիչ է։

Իսկ ինչ բանի համար որ ինչպէս Բիւլովը դիպլոմատիկական արշաւանք է սկսել Ֆրանսիայի դէմ նա այդ կը ստանայ առանց պատերազմի։ Եթէ լրագրները պատերազմի փող են փչում, դա միայն լինում է աւելի շուտ, առանց պատերազմի, ձեռք բերելու այն, ինչ որ Մարոկկոն պատրուակ առած ուզում է ձեռք բերել Վիլհելմի կառավարութիւնը։

Պէտք է իմանալ, որ ֆրանսական կառավարութիւնը յանձին Դելկասսէի (նախկին արտաքին գործերի մինիստր) բաւականին տարիներ աշխատում էր անտես անել Գերմանիան և կըղզիացնել նրան, որպէս զի վերջինս մենակ մնայ։

Գերմանական կառավարութիւնը յարմար ժամանակին սպասելով հասուցանում է Ֆրանսիային՝ զգացնել տալով նրան իւր զօրութիւնը։

Ս. Ս.

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Կովկասի փոխարքան հետևեալ հեռագրներն է ստացել Ղվիրիլուց.

I

14 յունուարի։ Գնդապետ Կրըլովը, զօրքով Օզուրգէթ հասնելով, զեկուցանում է, որ բնակիչների մի մասը հեռացել է լեռները, վախենալով ռեպրեսսիայից, միւս մասը թալան անելու նպատակով մի շարք հրդեհներ ձգեց, որի ժամանակ պայթում էին բազմաթիւ փամփուշտներ և ռումբեր։ Զօրքն սկսեց կատարել իւր գործը։ Այսօր Շորապանի գաւառի չորս հասարակութիւններից հետևեալ հեռագիրն ստացայ. «Ամեն դասակարգի և կարողութեան տէր անձեր, աւելի քան հինգ հազար հոգի, այսօր հաւաքուելով Սաչխերում իրենց քահանաների առաջնորդութեամբ, Թագաւոր Կայսրի պատկերով և դրօշակներով, Աստուածամօր հրաշագործ պատկերի առաջ հանդիսաւոր ծնրադրութեամբ հաւատարիմ հպատակութեան երդում տուին Նորին Կայսերական Մեծութեանը և երդուեցին մատնել պետութեան վնասակար իրենց բոլոր անդամներին։ Խնդրամատոյց են լինում ուժեղացնել վարչական պահպանութիւնը և աղաչում են, որ ձերդ գերազանցութիւնը գայ անձամբ»։ Ստորագրել են աւագները։ Բատալիօնները ձերբակալութիւններ կատարեցին, դատարանը հասաւ, արդէն յանձնուած են թենգինցիների վրայ յարձակուող գործողները։ 15-ին պահանջների կատարման պայմանաժամն է։

Գեներալ-մայոր Ալիխանով

II

15 յունուարի։ Այսօր հասայ Ղվիրիլի, զօրքի բոլոր սպաների և տեղական քաղաքացիական պաշտօնեաների ներկայութեամբ ընդունեցի Շորապանի գաւառի գիւղական 12 հասարակութիւնների ութհազարեան մի բազմութիւն, որին գլուխ էր անցած հոգևորականութիւնն ու ազնուականութիւնը բարձր բռնած Թագաւոր Կայսրի պատկերներով, բազմաթիւ ազգային դրօշակներով և սրբոց պատկերներով։ Այս գլխաբաց ու լուռ համախմբութիւն ամենքին ապշեցնող մի տեսարան էր ներկայացնում։ Ընթերցումն ու թարգմանութիւնը լըսելուց յետոյ, պատգամաւորութիւնները բարձրաձայն կատարեալ պատրաստականութիւն յայտնեցին անշեղ կատարելու ամբողջ նահանգի բնակչութեանն առաջադրուած հետևեալ ընդհանուր պահանջները և ներկայացրին այդ մասին հասարակութիւնների որոշումները. դադարեցնել ամեն տեսակ անկարգութիւններ, դառնալ խաղաղ պարապմունքների, վերականգնել կառավարչական և հասարակական բոլոր հաստատութիւնները, ներկայացնել արքունական գանձարանին մինչև փետրուարի 1-ն արքունական և զեմստվային դրամական տուրքերը, վերադարձնել յափշտակած զէնքը և փամփուշտները, անյապաղ կատարել զինուորական ծառայութիւնը, տալ կալուածատէրերին իրենց հողից հասանելիք տուրքերը, իշխանութեան ձեռքը յանձնել բնակչութիւնը խռովող պարագլուխներին և փախստական զինուորներին, վերադարձնել արքունական հաստատութիւններից և մասնաւոր սեփականատէրերից յափշտակած կայքերը։ Սրանից յետոյ հոգևորականութիւնը ժողովրդին երդուեցրեց Թագաւոր Կայսրին հաւատարիմ հպատակ լինելու։ Զինուորական երաժշտական խումբը նուագեց ազգային հիմնը, որի վրայ օդը թնդաց «ուռա» աղաղակներով, իսկ ես խոստացայ այս բոլորի մասին յայտնել ի գիտութիւն ձերդ պայծառափայլութեան։

Գեներալ-մայոր Ալիխանով

III

15 յունուարի։ Յանձնաժողովը ձեռնարկեց նախնական քննութեան Ղվիրիլի կայարանում։

Գեն.-լէյտ. IV Եանուշկովսկի

17 յունուարի։ Վերջացնելով Շորապանի և մասամբ Քութայիսի գաւառների գործերը, պատիւ ունիմ զեկուցանելու, որ 36 գիւղական հասարակութիւնների բազմաթիւ պատգամաւորութիւններ, որոնք եկել էին Թագաւոր Կայսրի ու սրբոց պատկերներով և ազգային դրօշակներով, լսելով առաջադրուած պահանջները, ներկայացրին իրենց որոշումներն այդ պահանջներն անպայման կատարելու որոշուած ժամանակամիջոցում։ Գալիս և ներում են հայցում փախստական զինուորներն ու կալանաւորները։ Փողերը կը սկսեն ներկայացնել երեք օրից յետոյ։ Սպասում են զինուորահաւաք նշանակելուն, բերեցին յանձնեցին թենգինցիների վաշտի զէնքը։ Այս մասում անդորրութիւնը կատարեալ է։ Սոյն բանի մասին զեկուցում ստացայ նաև Գուրիայից, որտեղ գնդապետ Կրիլովը գործում է հիանալի կերպով։ Բելոգորում պահակ զինուորները հանդիպեցին երկու զինուած միլիցիոների, որոնցից մէկն սպանուած է, միւսը վիրաւորուած։ Խլուած են հրացաններ, ատրճանակներ, դաշոյններ։ Նահանգում ցրուած խառն զօրքերը կանոնաւորեցի և բաժանեցի չորս զօրամասերի, որոշ նպատակով, մէկը Քութայիսի միւսը Ռնահանդի, երրորդը երկաթուղիների և չորրորդն իբրև թռուցիկ զօրամաս գործելու համար այնտեղ, ուր հարկաւոր կըլգայ։ Առաւօտեան մեկնում եմ Քութայիս։

Գեներալ-մայոր Ալիխանով.

ՔՐՈՆԻԿՈՆ

ԹԻՖԼԻՍ

Թիֆլիսի ընդհանուր-նահանգապետ գեն. Տիմոֆէևը յուն. 19-ին հրատարակած իւր կարգադրութեամբ պարտաւորեցնում է, որ այն ամենը, որոնք հրազէններ և սրեր ունին, երեք օրուայ ընթացքում յանձնեն կոմենդանտի վարչութեանը կամ մօտակայ զօրամասերը, հակառակ դէպքում կըհամարուեն իբրև ապստամբ և կըդատուեն պատերազմական ժամանակի օրէնքներով։ Այն բնակարանների տէրերը, ուր կըգտնուեն զէնքեր, պահեստներ, ռումբեր և պայթուցիկ նիւթեր, կըձերբակալուեն և կըդատուեն պատերազմական ժամանակի օրէնքներով։ Զէնք պահելու և կրելու համար ունեցած թոյլտուական վկայականներից օրինական են միայն նրանք, որոնք ստացուած են Թիֆլիսում պատերազմական դրութիւն մտցնելուց յետոյ։

— Այն խանութատէրերը, որոնք դեկտ. 22-ին վնաս էին կրել Սալդատսկի բազարում պատահած անկարգութիւնների ժամանակ, դիմել էին իշխանութեանը վարձատրութիւն խնդրելով իրենց կրած վնասների համար։ Իշխանութիւնը պատասխանել է,—որ նրանք կարող են դիմել դատարան։

— Մուխրանեան կամրջի համար ինժ. Կարելինի ներկայացրած ծրագիրը որոշուած է ուղարկել Կիեւի պոլիտեխնիկումի պրոֆեսոր Պատոնի քննութեան։

— Մետեխի բերդից արձակուած են վաճառականներ Ա. Մձեղլով, Ա. Սարուխանով, Ռ. Միրիմովիչ և Ի. Թոխաձէ, որոնք յունուարի 9-ին ձերբակալուած էին իրենց խանութների վրայ դրուած կնիքները պոկելու համար։ Նրանք յանձնւում են դատի պատժական օրէնքների 304-րդ յօդուածի հիման վրայ։

— Ֆ. Կիկվաձէ իրաւունք է ստացել Թիֆլիսում հրատարակելու վրացերէն մի լրագիր «Գանթիադի» («Արշալոյս») անունով։

ՌՈՒՍԻԱ

Լրագրութեան տարածած այն լուրը, թէ արդարադատութեան մինիստր գաղտ. խորհրդ. Ակիմովը հեռանում է իր պաշտօնից, ճիշտ չէ։

—Մայրաքաղաքում շրջող յամառ լուրերի համաձայն, մանջուրեան զօրքի ընդհանուր հրամանատար գեն.-ադիւտ. Լինեւիչը հեռանում է իր պաշտօնից և նրա յաջորդ համարւում են գեն.-ադ. բարոն Մէյենդորֆը։

—Վարշաւ քաղաքի կեդրոնական մասում ոստիկանութիւնը փակել է այն տպարանը, ուր տպւում էր սոցիալիստական հանդէս „Продетарій“։ Գրաւուած է այդ հանդէսի առաջին համարից 10,000 օրինակ։

— Մոսկւայում Խարկովից հեռագրներ են ստացել, որոնց մէջ ասուած է, թէ այդ քաղաքում ձերբակալութիւններն առաջ են տարւում մեծ եռանդով, Ձերբակալուածն հասարակական գործիչներ և հանրային հաստատութիւնների ծառայողներ։ Սումսկի գաւառում ձերբակալուած են բոլոր գաւառական բժիշկները, բացառութեամբ երկուսի։ Բանտերը լի են։ Ոչ ոք չգիտէ, թէ ուր է գտնւում Սումսկի գաւառական բժիշկ Լինտովարեր։

—„Нов.“-ն հաղորդումէ, որ „Гвоздь“ գեղարուեստական-պատմական հանդէսի խմբագիր-հրատարակիչ Ի. Մ. Մուրաւկինը երդուեալ հաւատարմատար Ի. Լ. Կրէպսի միջոցով գանգատ է յարուցանում ներքին գործերի մինիստր Դուրնովօյի դէմ, պահանջելով վերջինիցն այն վնասները, որոնք ունեցել է Մուրաւկինն իր հանդէսի առաջին համարի ապօրինի կերպով արգելուելու պատճառով։

—Պետերհոֆի գաւառական գիմնազիոն դեռ շարունակում է արձակել այն ուսուցիչներին, որոնց վրայ տեղական ոստիկանութիւնը կասկածներ ունի, թէ նրանք գիւղացիների մէջ գաղտնի յեղափոխական պրոպագանդա են անում և զինուած ապստամբութեան գրգռում։

—Այս օրերս աւարտուել է «պաշտպանողական գնացքի» կազմումը։ Դա յատկացուած է երկաթուղային գծերի, կայարանների, երկաթուղական շէնքերի պահպանութեան գործին, այդ ճանապարհների վրայ անկարգութիւններ առաջացած դէպքերին։ Գնացքը մշտապէս գտնւում է կազմ ու պատրաստ վիճակի մէջ և իր մէջ ունի բաւական թւով թնդանօթներ, պուլէմետներ։ («Воен. Гол.»)

—Մամուլի գործիչների դաշնակցութեան անդամներից 40 հոգի ձերբակալուած է։

—Միտաւայից (բալթ. նահանգներ) «Нов. Врем.»-ին հեռագրում են «Խառնվութիւններով բռնուած շրջանից ստացուած վերջին տեղեկութիւնների համաձայն, զինուորական իշխանութիւնները գործում են մեծ եռանդով։ Ապստամբութիւնն արագ խեղդելու համար, զինուորական իշխանութիւններն աշխատում են շարժման պարագլուխները ձեռք անցնել և հրացանի բռնել։ Խոյս տուողների տուն-տեղն ու ստացուածքն այրւում են։ Մինչև այժմ խռովութիւնները բոլորովին արմատախիլ արուած կը լինէին, եթէ պահանջուած թւով զօրք լինէր»։

—Կուրսկ քաղաքից „Р. С.“-ին հաղորդում են, որ վերջին օրերս Սուջում, քաղաքի շրջականները բնակւող գիւղացիների մի մեծ ամբոխ, քաղաքացիների հետ միասին, խորտակելով բանտը, 37 բանտարկեալ է ազատել, որոնք կալանաւորուած էին հողային շարժումների պատճառով։

—Մենք առիթ ունեցանք, ասում է „Нов.“ լրագիրը—խօսակցելու արտասահմանեան երկու պետութիւնների ներկայացուցիչների հետ Ռուսիայի ներքին վիճակի մասին։ Այդ խօսակցութիւնից երեւացել է, որ արտասահմանցիները խիստ յոռետես են ռուսական ներքին գործերի վերաբերմամբ։ Սրանից ոչ շատ առաջ արտասահմանում ենթադրում էին, թէ ռուս կառավարութիւնն աշխատում է անկարգութիւնները շուտով զսպել նրա համար, որպէս զի կարողանայ հանգստութեամբ մըտցնել առաջադրուած բարի փոփոխութիւնները։ Սակայն, ներկայումս արտասահմանեան դիւանագէտների կարծիքով, ռուս կառավարութիւնը բոլորովին տարբեր դիրք է բռնել։ Ազատական շարժման բոլոր մասնակցողներին նա այժմ համարում է իր հակառակորդները, որոնց հետ հարկաւոր է կռուել այնպէս, ինչպէս սովորաբար կռւում են թշնամու դէմ, այսինքն գործը հասցնել իր վախճանին և ապա ձեռք բերած հետեւանքներով սահմանել իր համար նոր դիրք։ Այդ տեսակէտից, կառավարութիւնը պէտք է աշխատի որքան կարելի է Դումայի բացումը յետաձգել, իսկ յետոյ բոլորովին ոչնչացնի։ Երկուսն էլ հաւանականութիւնից զուրկ չէ։

—Արտասահմանցիների կարծիքով, Ռուսիայում. ներկայումս առաջ է տարւում միջազգային պատերազմ, և պատերազմող կողմերից իւրաքանչիւրը, յաղթութիւնը տարած դէպքում պէտք է աշխատի հակառակորդին կատարելապէս զինաթափ անել։ Ռուս կառավարութիւնը հաւատացած է, թէ յաղթանակն իրենն է մնալու, կարծում են, որ կռիւը դեռ յառաջիկայում է և թէ նրա վճռական հետեւանքի մասին չի կարելի այժմից ոչ ասել։ Պատմութեան տուած դասն այն է, որ յաղթանակը վերջ ի վերջոյ ազատութեան համար կռւողների կողմն է մնալու։ Սակայն, դժուար է ասել, թէ Ռուսիայում երբ կլինի դա։ Որպէս ապացոյց այն բանի, թէ ռուս ներկայ կառավարութիւնը չի մտցնելու խոստացած բարի փոփոխութիւնները, կարող է ծառայել արտաքին փոխառութեան նկատմամբ վերաբերմամբ Ռուսիայի ստացած մերժումը։ Նա կարող էր փող գտնել, եթէ արտասահմանում հաւատային, թէ Պետական Դուման հրաւիրուելու է, սակայն այդ հաւատքը պակասում է։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԻԳԴԻՐԻՑ.— 12 երկար ու ձիգ տարիներ մեր Սուրմալուի բնակչութիւնն ընդհանրապէս և հայ տարրը մասնաւորապէս հեծում, կեղեքւում էր Գալիցինի հաւատարիմ պաշտօնեայ բռնակալ Բոգուսլաւսկու՝ ճիրաններում։ Տասներկու տարի էր, ինչ մեր գաւառի ազատարար շարժման պարագլուխները ենթարկւում էին զանազան խուզարկութիւնների, ստորացուցիչ զրպարտութիւնների, աքսորի, բանտարկութեան... Եւ ահա 1903 թ. յուլիսին բացւում է ողորմութեան դուռը, չարիքը մէջտեղից վերանում է, որով և բնակչութիւնն ազատ շունչ է առնում։ Հանգուցեալ Բոգուսլաւսկու մահուանից մի քանի ամիս յետոյ՝ գալիս է Սուրմալու գաւառապետի պաշտօնով պ. Դուդնիկով, որ հէնց սկզբից ցոյց տուաւ իր անաչառ և խաղաղասէր բնաւորութիւնը։ Բոգուսլաւսկուց յետոյ Դուդնիկովը մեր գաւառի համար իսկական ողորմութիւն էր։ Նա հազիւ 2 տարի մնաց Սուրմալուում և այդ կարճ ժամանակամիջոցում ամբողջ բնակչութիւնից ստացաւ այնպիսի մի յարգանք ու համակրանք, որ արտայայտուած տեսանք յունուարի 7-ին նրա այստեղից հեռանալիս։ Մինչդեռ Կովկասի բոլոր անկիւններում, ուր կան հայեր ու թուրքեր, եղել են և լինում են կռիւներ, սակայն մեր Սուրմալուում, որտեղ աւելի քան սպասելի էր խիստ ընդհարումն՝ իր աշխարհագրական դիրքի տեսակէտից, այդ չեղաւ, շնորհիւ Դուդնիկովի։ Եւ ահա՝ հայկական այս ճգնաժամին մենք սուրմալուեցիքս յանձին Դուդնիկովի կորցնում ենք մի մեծ հովանաւորի։ Դուդնիկովի հեռացումը թէպէտ մի կողմից մեզ ցաւ է պատճառում, բայց միւս կողմից մեզ ուրախացնում է։ Ցաւալի է, որովհետև նրա հեռացումով կարող են մեր գաւառում էլ ընդհարումներ տեղի ունենալ, ինչպէս այդ եղաւ Ղազախի գաւառում՝ Արնոլդի հեռանալուց յետոյ. ուրախալի է, որովհետև պ. Դուդնիկովը գնում է նոյն պաշտօնով Նախիջեւանի գաւառը։ Մենք յոյս ունենք, որ պ. Դուդնիկովը՝ նոյն խաղաղասէր և, որ գլխաւորն է, անաչառ դիրքը կբռնէ նաև Նախիջեւանում։ Սա էլ երկրորդ գաւառապետն է (առաջինը Սլաւաչինսկին), որ Սուրմալուի ժողովրդից յարգուած տեղափոխւում է Նախիջեւան։

ՄԱՄՈՒԼԻ ՑՈՒՐՋԸ

Գրաֆ Վիտտէի կառավարութեան Մոսկուայում, Ռոստովում և մի քանի ուրիշ քաղաքներում անմեղ ժողովրդին կոտորելը դեռ չի նշանակում յաղթանակը տանել և շարունակւող յեղափոխութիւնը խեղդել։ Օրըստօրէ առաջ եկած բարդութիւններն ապացուցանում են դրա բոլորովին հակառակը։ «Новости»-ն հէնց այդ կէտն է, որ շօշափում է իր վերջին համարներից մէկում։

Կարճատես կառավարութիւնն արդէն պատրաստւում էր իրեն յատուկ յետադիմական բացատրութիւնը տալ հոկ. 17-ի մանիֆեստին և ռուս ազգի բաղձալի անիւը յետ դարձնել։ Նա մի վայրկեան ուզեց կարծել, թէ միայն տաք գլուխներն են, որ ազատութեան են բարձրացնում, իսկ ժողովրդի մեծագոյն մասն իրանից սպասում է «կարգի» վերահաստատում ձերմակ տերորի միջոցով։ Սակայն, կառավարութիւնը սխալուեց։ Նրա դէմ են նոյնիսկ երկրի ամենապահպանողական տարրերը, այսինքն նրանք, որոնց նա, իւր քաղաքականութեան զօրաւիգն համարելով, երկար ժամանակ հովանաւորում էր։

Երեկ հեռագիրը բերեց կառավարութեան համար կարևոր մի տեղեկութիւն։ Ազնուականների ներկայացուցիչների ռուսական համաժողովը,—հեռագրում են Մոսկուայից,—երկար վիճաբանութիւններից յետոյ, ձայների մեծամասնութեամբ որոշեց միջնորդութիւն յարուցանել Պետական Դումայի հրաւէրը եղածի չափ շուտով բացելու մասին և նկատի ունենալով պետութեան տագնապալից դրութիւնը և դէպի գրաֆ Վիտտէի կառավարութիւնն ամբողջ երկրի ցոյց տուած բացարձակ անվստահութեան հանգամանքները, որոնց պատճառով թախանձագին աղերսել Թագաւոր Կայսրին, Պետական Դումայի բացման ճիշտ օրը նշանակելու։

Այս որոշումը,—եզրակացնում է լրագիրը,—կառավարութեան համար ճակատագրական էր։ Եւ դու, Բրուտոս—համարձակ կարող է ասել ազնուականութեանը։ Այո, ձեր բարեկամներն անգամ այժմ ձեզ հակառակ են։ Կառավարութիւնը զրկուեց իւր վերջին պաշտպաններից, վստահութեան վերջին նշոյլից։

⁂

Բազմաթիւ ու բազմատեսակ են այն խոշոր սխալները որոնք, կատարուած են մեր ծայրայոյն տարրերի կողմից հայ յեղափոխութեան սկզբից մինչև ներկայ օրերը։ Սասնոյ [illegible] այդ շարժման տուած օրուանները, երբ աչքի առաջ ենք բերում միւս կողմից նրա կատարած սխալ քայլերն ու դրանց տուած դառն պտուղները, վերջապէս, թրքահայ ժողովրդի վերջին տարիների ընթացքում կրած անլուր հալածանքները,—անտարակոյս է դառնում, որ հայ յեղափոխական կազմակերպութիւնները, որոնք իրենց նպատակ են դրել թրքահայի վիճակը բարելաւել, շատ հեռու են իրենց կոչման բարձրութիւնից և մատուցուած նպատակի վերաբերմամբ օգտակար դառնալուց։ Այդ տխուր եղած գժգոհութեան ձայները հետզհետէ աւելի ու աւելի են բազմանում և դրանցից մէկն է ներկայանում նաև «Արաքս» շաբաթաթերթը, որի անցեալ տարուայ նոյեմբերի 11-ի համարում պատահում ենք հետեւեալ բուռն բողոքին։

Մեր յեղափոխական կուսակցութիւնները թող անկեղծ ըլլան խոստովանելու թէ իրենց ոյժը, իրենց ճիգերը, իրենց լաւ գործիչներն ապրած են արտասահմանի մէջ, գործած են արտասահմանի մէջ, ու արտասահմանը Հայաստանէն շատ աւելի լաւ սերտած։ Եւ դեռ շատ աւելի գոհ պիտի մնայինք անոնցմէ, եթէ պարզօրէն-բաժին մեզ թէ իրենք հոն, արտասահմանի մէջ ունին զօրաւոր կազմակերպութիւններ, խումբեր ու մասնաճիւղեր, իսկ երկրի մէջ՝ շատ աննշան դեր մը ունին։ Կովկաս չենք անտեսեր։ Այն ինքնապաշտպան կռիւը, զոր մղուեցաւ հոն՝ արժանի է բոլորիս հիացման։ Յարգանք բոլոր անոնց, որոնք գիտցան ինքնապաշտպան սրի կռիւը մղել։ Բայց անոնք տեղացիներ էին, բուն իսկ կովկասցի հայերը։ Աւելի աւելի զօրաւոր ինչ փաստ կուզէք տեղական ոյժի, տեղական ժողովրդի ընդհանուր գիտակցութեան ու պատրաստութեան պահանջքին, որը քանի տարիներ է աւելի Հայաստանի ժողովուրդը կը պոռայ, բայց իր ձայնը միշտ ալ անլսելի մնացած է։

Կը կրկնենք, այդ բողոքն անլսելի մնացած է, որովհետև քանի մը անհատներ, որոնք իրենց կեանքի մէջ Հայաստանը բնաւ տեսած չունին, յաջողած են արտասահմանի մէջ իրենց շուրջը բոլորել, արտասահմանի հայութիւնէն մաս մը, ապահովել իրենց ապրուստն և պատգամները ուղղել մեր գլխին, ու այդ պատգամները միշտ ալ կախուած մնացած են այն պարագային թէ հովը ո՞ր կողմէն կը փչէ։ Ու դեռ աւելի դժբաղդութիւն մըն ալ կայ, երբ հայաստանցի, կամ բուն իսկ իրենց խօսքով՝ «գաւառցի» երիտասարդներ ձայն բարձրացուցած, բողոքած են իրենց հակառակութեանց ու անոր քանդումներուն դէմ, իրենց ամբողջ ճիգը կեդրոնացուցած են վարկաբեկ ընելու, զրպարտութիւններով ու սուտերով «սեղմելու» այն մարդոց, որոնք իրենց անկեղծ բողոքներով արձագանք հանդիսացած են Հայաստանի էն հայաշատ նահանգներու բնակչութեան ձայնին։ Ո՛րքան տխուր ու սրտաբեկ փաստեր կան այդ տմարդութեանց, որոնք կատարուած են մեր աչքին առաջ, ու ժողովուրդը լուռ մնացած է. և կամ չէ կրցած տեսնել։ Մինչև ե՞րբ։

Մինչև ե՞րբ պիտի շարունակուին այս արտասահմանեան հակառակութիւնները, մինչև ե՞րբ ժողովուրդն իր բաղդը պիտի թողու ինքնակոչ և ինքնիշխան ղեկավարներու ձեռքին, ղեկավարներ, որոնք սրբութիւն չթողին որ ոտնակոխ չըրին, ղեկավարներ, որոնք զուրկ են իրական մտաւոր կարողութենէ, ղեկավարներ, որոնք կը շահագործեն արտասահմանի ժողովրդի զգացումներն ու ոտնակոխ կ'ընեն հայաստանցու ձայնը։ Օր մը մեզ խոհեմութեան քարոզներ կը կարդան, գաղտնապահութեան դասեր կուտան սորվեցնել մինչ անոնք իրենց ամբողջ դաւանիքները բանալով անհամեստ մը Թուրքիա կը ղրկեն յայտ ու ան կը մատնէ ամէն բան։ Յեղափոխականներ արտասահմանէն չեն երթար, հոն են այն գանձիկ սարի լաճերը, որոնց կարհամարհէք, անոնք են որ գլուխնին տալով, գլուխնին դիմանալով երբ իրենց մարմնի մասերը կտոր կտոր կը կտրեն, ու իրենք լուռ կը մնան։

Կարծում ենք արդար դայրոյթի արտայայտութիւն եղող այդ տողերը բոլորովին էլ զուրկ չեն ճշմարտութիւնից։ Մեր յեղափոխական կազմակերպութիւնները, որքան էլ մեծ համարում ունենան իրենց գործունէութեան բեղմնաւորութեան վրայ, այնուամենայնիւ պարտաւոր են իրենց քայլերը կշռելու և յեղափոխական գործունէութեան չափալու այն ընթացքը, որ փոխանակ օգտակար լինելու, ընդհանրապէս ժողովուրդը բնաջինջ լինելու վտանգներին է ենթարկում։

Պարոններ, չափազանց մեծ է ձեր պատասխանատուութիւնը կորստեան անդունդի եզերքը հասցուած հայ ժողովրդի առաջ։ Աւելի լաւ է ոչինչ չանել, քան ունենալ մի գործունէութիւն, որը միայն և միայն վնաս, սոսկալի վնաս է առաջացնում։

ՔՈՒԹԱՅՍԻ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԻՑ

Վրացի „Ցնոբիս-Փուրցելի“ թերթին Քութայիսից հաղորդում են. «Ինչպէս արդէն ձեզ հաղորդել էի, ընդհանուր գործադուլ հրատարակուելուց պէս, նահանգը բոլորովին կտրուած էր աշխարհից։ Ոչ ոք չէ գիտէր, թէ ուր ինչ է կատարւում։ Լրագիրներ ամենևին չէին ստացւում։ Միայն դեկ. 28-ին էր, որ Բաթումից եկող ճանապարհորդները բերել էին Խրիմի թերթեր։ Դրանցից էր, որ մենք տեղեկութիւններ ստացանք Ռուսիայում կատարուող անցքերի մասին. դարձեալ այդ օրն էր, որ լուր ստացանք Տփլիսում ժողովրդի ու զօրքի մէջև տեղի ունեցած ընդհարումների մասին։ Երկու օր յետոյ լուրեր ստացանք նաև Բելոգորից, Ղվիրիլայ։ Այդտեղերում կատարուած դէպքերը սաստիկ վիշտ պատճառեցին ժողովրդին։ Սարսափը տիրել էր ամենքին. ամեն բոպէ սպասում էին աւելի խիստ բարդութիւններ և ընդհարումներ զօրքի հետ։ Սակայն նահանգապետ Ստարոսելսկին եռանդով կերպով աշխատում էր մեղմացնել տագնապի առաջն առնել։ Նրան օգնում էին այդ բանում նաև քաղաքի ներկայացուցիչները։ Ամենքն այն կարծիքին էին, թէ խաղաղութիւնը չի խանգարուիլ։ Հասաւ նոր տարին, և մի քանի օրից լուր ստացւեց որ յունուարի 3-ին գործադուլը վերջացած է։ Յունուարի 4-ին պատահեց առաջնատաջին վերսկսեցին աշխատանքները, իսկ ամսի 5-ին քաղաքում արդէն բաժանւում էին լրագիրներ և ուրիշ թղթակցութիւններ։ 17-ին վերսկսեցին հաղորդակցութիւնները Քութայիսի, Բաթումի ու Փոթու մէջև։ Երկաթ. գծի վրայ հետագիծը շատ քիչ էր վնասուած և այն կարելի եղաւ կարգի բերել մի օրում։

«Յունուարի 8-ին կայծակի արագութեամբ տարածուեց այն լուրը, թէ Թիֆլիսից, Բաթումից ու Փոթուց Քութայիս զօրք է գալիս։ Սոսկալի երկիւղը տիրել էր ամենքին։ Ամսի 9-ին, ինչպէս ամենուրեք, նմանապէս և Քութայիսի նահանգում յայտարարուած էր մի օրուայ ընդհանուր գործադուլ։ Այդ միևնոյն օրը Ճիաթուրից քաղաքս բերին զինաթափ արուած ռոտան, որը գերի էր ընկել։ Ռոտային հրամայուեց գնալ իրենց զօրանոցները, սակայն նրանք պատասխանում են. «Մինչև մեր զէնքերը չվերադարձնէք, մենք չենք կարող զօրանոցները գնալ»։ Ուստի պէտք եղաւ այդ զօրքին տեղափոխել մասնաւոր տան մէջ։ Ահա այդ օրուանից է, որ կամաց-կամաց սկսում է պարզուել, թէ ուր ինչ է կատարուել ժողովրդի ու զօրքի միջև։ Գնդապետ Ջիկովանին իր զօրախմբով դիմեց Ճիաթուրա։ Յուն. 9-ին, կէս գիշերը ժամը մօտ 2-ին, քաղաքի մէջ երեք տեղում կրակ երևաց, և այրուեց 30 վաճառատանից աւելի, որոնց վնասները հասնում է 500000 ր.։ Նահանգապետ Ստարոսելսկին դարձեալ օգնութեան հասաւ։ Նա քաղաքացիներին ժողով գումարեց, որը որոշում կայացրեց կառավարութեան օգնել խաղաղութիւնն ու հանգստութիւնը վերականգնելու գործում։ Այդ գործը որոշուած էր յանձնել զինուորականներին և քաղաքացիներից նոր կազմուած կամաւորներին, որը պարտաւոր էր տեղական ոստիկանութեան արտօնագրութեան տակ գործել։ Այդ միևնոյն օրը նահանգապետի մօտ են գալիս երկու սպայ, դրանցից մէկը կապիտան էր, որը և նահանգապետին ասում է. «Ես սէմէօնովսկի գնդի կապիտան եմ և Կովկաս եմ ուղարկուած յատկապէս Նորին Կայսերական Մեծութեան հրամանագրով։ Պ. Ստարոսելսկի, եթէ յընթացս 24 ժամուայ դուք չեք ձերբակալել տալ ու ինձ չեք ներկայացնիլ 140 յայտնի անձնաւորութիւններ, այն ժամանակ կը կարգադրեմ թւով տասն անգամ աւելի մարդ կախել, բացի դրանից, դուք էլ կը կալանաւորուէք»։

Նահանգապետը հազիւ է կարողանում վրդովուած կապիտանին հանգստացնել։

Գեներալ Ալիխանովից հեռագիր է ստացւում, որով նահանգապետն ու իր օգնական Կլալիձէն կանչւում են Ղվիրիլա։ Նրանք որոշում են երթալ։ Սակայն մինչև ճանապարհ ընկնելը, նահանգապետի տունը շրջապատւում է Ճիաթուրայում գերի ընկած զօրքերով, մօտաւորապէս 50-ի մօտ կազակներով և մի քանի սպաներով։ Այն տեղ է գալիս նաև վերոյիշեալ կապիտանը։ Դուրս են կանչւում նահանգապետին և նրան յայտարարում. «դուք պարտաւոր էք վերադարձնել մեզ մեր զէնքերը»։ Ստարոսելսկին հանգստացնում է զօրքը և յայտնում, որ ամեն միջոց ձեռք կառնի նրանց զէնքերը վերադարձնելու։ Հէնց այդ բոպէին այստեղ են գալիս գեն. Շիշկովսկին և զօրաբաժինների կառավարիչը, որոնք հանգստացնում են զօրքը և ուղարկում զօրանոցները։

Նահանգապետն ու իր օգնականը գնում են Ղվիրիլա. նրանց ընկերակցում էին ժանդարմերիայի փոխգնդապետն և վերոյիշեալ կապիտանը։

Յունուարի 15-ին լուր ստացանք, որ գեն. Ալիխանովը նահանգապետ է նշանակել Ն. Գ. Պրինցին և նահանգապետի օգնական՝ Քութայիսի գաւառապետ Իլ. Դադիշկելիանուն։ Միևնոյն օրը, նոյն կապիտանը, վերադառնալով Քութայիս, գնում է Ստարոսելսկու տուն և նրա կնոջը յայտնում. «Բարձրագոյն Իշխանութեան կարգադրութեամբ, ձեր ամուսնուն տարան Զարաւ, ուր պէտք է ենթարկուի մահուան պատժի։ Ես այդ ձեզ ասում եմ որպէս գաղտնիք, իսկ եթէ դուք այդ հրապարակ հանէք, ձեզ էլ դատի կը «մատնեմ»։

Գեներալ Ալիխանովը Ղվիրիլում, իմանալով կապիտանի քաջագործութիւնները, հրաման է տալիս նրան ձերբակալել։ Կապիտանին ձերբակալում են Փոթում, ուր նա փախել էր Քութայիսից»։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱԳՈՒԻ ԴԷՊՔԵՐԻՑ

ԲԱԳՈՒ, 5 յունուարի.— Դեկտեմբերի 31-ին, այդ 1905 թ. մարդակեր տարուայ վերջը լինելով, երեկոյեան ժամը 7-ից սկսեց հրացանաձգութիւն դէպի օդը, որպէս թէ փախցնում էին հին տարուն։ Փողոցներում անցորդ թւով գրօսնողներ կային, որոնք մի ակնթարթում ծակ ու ծուկ մտան։ «Սկսուեց» լսւում էր հայերի, ռուսների և թուրքերի բերանից. լուռ էին միայն վրացիները։

Դաշնակցութիւնը մի օր առաջ արդէն իր մարդկանց միջոցով յայտարարել էր բերանացի կերպով հայ ժողովրդին, որ ոչ ոք հրացան չպարպի, այլապէս պատժի կենթարկուի։

Այդ գիշեր Դաշնակցութիւնը բաւական թւով ատրճանակներ և մի քանի էլ հրացան խլեց արձակողների ձեռից։

Հրացանաձգութիւնն սկսուեց Կրասնովոդսկայա փողոցից, Միրզաբեկեանի ծխախոտի գործարանի մօտից, որի մի կողմը հայի թաղն ու դիրքն է, միւսը՝ թուրքերի։

Առաջին գնդակ արձակողներն եղան վրացիները, առանց հասկանալու թէ ինչ մթնոլորտի մէջ ենք ապրում։

Երկու ժամից յետոյ հրացանաձգութիւնը դադարեց։

Այդ երեկոյ, երբ տեղի էր ունենում հրացանաձգութիւնը, մի թուրք գրգռում էր իր հաւատակիցներին ասելով. «Չէ, հայերի միտքը ծուռ է. նրանք ուզում են սկսել. տասնեակ թուրքեր սպանեցին իրենց թաղերում, բայց մեր բէնամուս թուրքերը անգամ հայերին չեն սպանում»։ Այդ թուրքը շամախեցի է, սիւննի աղանդին պատկանող և Աղալարով ազգանունով։

Լսեցի, որ այդպիսի գրգիռներ այդ գիշեր շատ են եղել, որովհետև համշահրիներն անգամ գիտէին. որ ամեն նոր տարուայ նախորդ գիշերը հրացանաձգութիւն է լինում ըստ հին աւանդութեան։

—

Փետրուարեան և օգոստոսեան կոտորածների ժամանակ, երբ հայերն իրենց տարով վարձած բնակարանները դատարկել ու հեռացել են ապահով թաղեր և թուրքերի տները դատարկ են թողել, թուրք տանտէրերն այժմ պայմանագրերը ներկայացնում են դատարան ու հայերից պահանջում են թէ 6—9 ամսուայ վարձը և թէ տուգանքը։ Եւ զարմանալին այն է, որ մեր դատաւորները, առանց իրենց խղճի առաջ հաշիւ տալու, վճռում են այդպիսի հայերից առնել թէ բնակարանների վարձը և թէ տուգանքը։ [illegible] ասել, որ դատարանների պաշտօնեաներից շատերն իրենքն իրենց կեանքն ազատելու համար, նոյնպէս առանց պայմանի ռէխին նայելու, տեղափոխուել են հայկական թաղերը, սակայն դրանցից ոչ ոք չի գանգատւում...

Թիֆ. ազնուակ. կալուածական բանկը, նոյնպէս և Խարկովի ու Բագուի բանկերն իրենց մօտ գրաւ դրուած տների վճարը կրճատել, պայմանաժամը երկարացրել են, իսկ մեր տնատէրերն ուզում են օրուայ հացի կարօտ արհեստաւորի ու ծառայողի վերջին ծուծն էլ քամել...

—

Թրքական մի առած ասում է՝ «Ալլահ հաքի նահախ վերմազ»... (Աստուած արդարին մեղաւորին չի տալ)։ Ինչպէս երեւում է, հէնց իրենք թուրքերն այդ իմաստուն առածն իրենց վրայ շատ են փորձել։ Ահա թէ ինչպէս։ Հոկտեմբերեան քաղաքական թալանի և սպանութիւնների ժամանակ, մի խումբ թուրք սրիկաներ (դօչիներ) հայերի ապրանքից մի նշանաւոր մաս իրենց ձեռն են գցում։ Խաղաղութիւնն հաստատուելուց յետոյ, ապրանքը սկսում են իրենց մէջ բաժանել. բայց շատ ու քչութեան մասին խօսք լինելով վէճ է ծագում նրանց մէջ. վէճն այնքան սուր կերպարանք է ստանում, որ մի քանի գիշերուայ մէջ դրանցից եօթը հոգի սպանւում են իրար ձեռքով։ Մնում են մի քանի հոգի, որոնք ամենայն հրճուանքով բաժանում են իրար մէջ կողոպտուած կայքը։ Անցեալ օրը Բագու են գալիս տաւար ծախելու համար երեք օսեր։ Դրանք իրենց կենդանիները տանում են քաղաքից դուրս, սպանդանոցի մօտ գտնուած «Հասար» կոչուած հրապարակը, որ թուրքերի թաղն է։ Վերոյիշեալ թուրք աւազակները խորամանկութեամբ սպանում են օսերին և ծախած ապրանքի փողը վերցնում։ Վրացիները և օսերը այդ լսելով ատամ են կրճտում թուրքերի վրայ և ասում են՝ «Մէկի տեղը հարիւր թուրքից պիտի հանենք»։ Սակայն թուրքերն օսերի թաղման օրը դիմեցին իրենց հին քաղաքականութեան. նրանք խանութները կողպեցին, երեք անմեղ օսերի դագաղն առան իրենց ուսերի վրայ և մինչև գերեզմանատուն թողլ չտուին, որ մի վրացի դագաղից բռնէ, ուղիղ այնպէս, ինչպէս իշ. Նակաշիձէի դագաղը տարան, Վրացիք հանդարտացան թուրքերի գործ դրած ուսայլութեան վրայ, և գործն այդպէս էլ մոռացուեց...

Փարու։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

18 յունուարի.

ՄԻՆՍԿ, 16 յուն.—Նահանգապետի և ոստիկանապետի կեանքի դէմ փորձ փորձող յանցաւորների անձնաւորութիւնները պարզուել են։ Ռումբ նետողը երկրաչափի որդի է, ռէալական դպրոցի աւարտած, Պուլիխով ազգանունով։ Իսկ ոստիկանապետի վրայ ատրճանակ արձակող կինը՝—արտիլերիայի գեներալ Իզմայլովիչի դուստրը։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, 17 յուն.—Մինիստր նախագահը յայտնեց արքային մինիստրութեան հրաժարական տալը. գահական փոփոխութեան պատճառով, նոր արքան ցանկութիւն յայտնեց, որ մինիստրներն առ այժմս շարունակէին իրենց գործը։ (Ռիտցաու).

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶ.— Գիւղերի մեծ մասը յանձնեց ուղարկուած զօրաբաժնի գլխաւորին՝—դեկտեմբերի անկարգութեանց գլխաւորներին, զէնքը և յափշտակած իրերի մի մասը։ Զօրաբաժինը զէնքի դիմեց միայն Կոդսու գիւղում, ուր բնակիչների յամառութեան պատճառով արձակուեց ռումբը, ոչ մի վնաս սակայն չհասցնելով։ Անկարգութեանց մասնակցող գիւղերը ենթարկուած են մեծամեծ տուգանքների։

ՎԱՐՇԱՒ.—„Варш. Курьер.“-ի ասելով, լուսաւորութեան մինիստրը յայտնել է Կալիշի նահանգի բնակիչներին, որ լեհական թաղականութեան տարրական դպրոցների հիմնական դասարաններում բոլոր առարկաների դասաւանդութիւնը, բացի ռուսաց լեզուից, կարող է կատարուել լեհերէն կամ լիտովերէն լեզուով։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ.—Կէսօրին արքայական պալատի պատշգամբից մինիստր-նախագահը հանդիսաւոր յայտարարեց արքայ Ֆրեդրիխ ութերորդի գահ բարձրանալը։ Ապա նոր արքան պատշգամբ երևալով դիմեց ժողովրդին մի ճառով, ժողովուրդը շնորհաւորեց նրան բարձրագոչ կեցցէներով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Վերջին շաբաթուայ ընթացքում խուզարկութիւններ անելիս Վարշաւ, Վիլնա, Եկատերինբուրգ, Լոդզ, Օդեսսա, Սուվալկի, Թիֆլիս, Սամարա և Իրկուտսկ գրաւուած են շատ փամփուշտներ, ատրճանակներ և ռումբեր։ Գտնուած են մի քանի արհեստանոցներ, որոնք պատրաստում էին պայթուցիկ գործիքներ։

Լեռնային տեխնոլոգիական և պոլիտեխնիկական ճեմարանի պարապմունքները յետաձգուած են մինչև աշունը։ Ուսանողներին արձակուրդ են տալիս մինչև սեպտեմբեր։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամը 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից » 7
Վելեամինովսկայա փողոց № 8։

Տ. Մ. Ռոտինեանցի
Типографія Т. М. Ротиніанца Голов. пр., д. № 41.